ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Կատարող՝ Վարդանուշ Բարսեղյան

«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ

դպրոց

Ղեկավար՝ բ. գ. թ, դոցենտ Աննա Յայլոյան

անուն, ազգանուն

ԳՅՈՒՄՐԻ - 2023

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում 5

Գլուխ 2. Ինչպես զարգացնել հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման կարողությունները <<Սասնա ծռեր>> դյուցազներգության օրինակով

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Ստեղծարար հայ ժողովրդի հանճարի վառ վկայությունը «Սասունցի Ղավիթ» հերոսական էպոսն է, որտեղ ներկայացված են արաբական արշավանքների շրջանի ժողովրդական կյանքի հանգամանքներն ու պատկերացումները, պատմական իրական եղելությունները գեղարվեստական խորը ընդհանրացումով: Այն կատարյալ է նաև գեղարվեստական խորը ընդհանրացումներով: Ավելին, էպոսում հարատևել են ավելի ուշ շրջանի եղելություններ ու անձնավորություններ: Մեր էպոսը աչքի է ընկնում գաղափարական հարուստ բովանդակությամբ:

«Սասունցի Ղավիթ» էպոսը հայ ժողովրդական ավանդության մեջ, բանասացների բերանում կրում է մի քանի անուն, որոնք և ընդգծում են նրա միասնությունն ու ամբողջականությունը: Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառը հայերենում ունի մի քանի նշանակություն՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ, և իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում:

Էպոսն անվանում են նաև «Ջոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն» (տարիքով և դիրքով ավագների), «Հսկաների տուն»:

Կա ևս մի անուն՝ «Քաջանց տուն», որ նշանակում է «քաջերի տուն», կամ դրսևորում է էպոսի առնչությունը քաջքերին, ոգիներին վերաբերող մի շարք ավանդությունների հետ: Այդ քաջանց տոհմին պատկանող կանանցից է ծնվում հերոսների երեք կրտսեր սերունդ:

Միշտ չէ, որ բանասացներն էպոսը լրիվ են հաղորդում, նրանք հաճախ պատմում են միայն մեկ կամ երկու հատված, էպոսի միասնությունն ընդգծելով այն ողորմիներով, որոնք փառաբանում են մնացած բոլոր հերոսներին: Պատմվող հատվածը կոչվում է այն հերոսի անունով, որի մասին հյուսվածէ էպոսի տվյալ ճյուղը: Էպոսի հիմնական մասը երրորդ ճյուղն է, որն անմիջականորեն կապված է ամբողջ դյուցազնաշրջանի չորս սերնդի հերոսներից գլխավորի, ըստ ավանդության երրորդ դյուցազնի՝ Դավթի հետ, որն առավել մոտ ու հարազատ է ժողովրդի սրտին, նրա հիշողության մեջ առավել փայփայված, առավել երկրային, ամենից ավելի ժողովրդական:

Եվ հենց սրանում էլ կայանում է թեմայի արդիականությունը:

Էպոսը ուսուցանվում է դպրոցում՝ որպես հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման և զարգացման հիմք:

Հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողների մեջ զարգացնել հայրենասիրությունն ու ազգային արժեհամակարգի գիտակցումն ու զարգացումը <<Սասնա ծռեր>> դյուցազներգության օրինակով:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել էպոսի հերոսների հայրենասիրական դրսևորումները, նրանց կերպարների միջոցով զարգացնել ազգային արժեհամագարգի ընկալումը
- ուսումնասիրել, թե ինչպես զարգացնել հայրենասիրությունը նազգային արժեհամակարգի գիտակցումը <<Սասնա ծռեր>> դյուցազներգության օրինակով:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Էպոսի հիմնական սյուժեի զարգացումը բնության ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, որոնք մարդկային հասարակության պատմության արշալույսին սկսեցին ընդունել կենդանական կամ մարդկայնացված ձևեր։ Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը ավելի ու ավելի է մոտենում երկրին, ավելի ու ավելի է մոտենում երկրավոր մարդու կերպարանքին։

Էպոսի հերոսները, ինչքան էլ իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով ու արարքներով կապված լինեն բնության և նրա ուժերի հետ, այն ուժերի, որ հնագույն մարդն անհամեմատ ավելի սուր էր զգում, քան այն մարդը, որն արդենվարժվել էր իրեն ենթարկել այդ ուժերի թեկուզ մի մասը խորապես մարդկային են։ Սրանք կենդանի մարդիկ են օժտված արիությամբ ու բարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ։ Նրանց երկրայինկյանքը պատկերող զրույցներում վառ արտացոլում են գտել ոչ միայն նրանց սխրա -գործությունները, այլև մարդկային զգացմունքները։ Էպոսի հերոսները սխրանքներ են կատարում, որովհետև այդպես է պահանջում՝ ժողովրդի բարօրությունը, և,որովհետև նրանք իրենց մեջ այդ կատարելու ուժ են զգում, այդ սխրանքները նրանցոչ մի առավելություն չեն տալիս, հերոսները չեն խզում իրենց կապը ժողովրդի հետ։ Հասակ առնելուց հետո էլ նրանք չեն կորցնում իրենց հոգու մանկական անաղարտու- թյունը, պարզասրտությունը, օգնության ամեն մի կանչի անհապաղ արձագանքելու հատկությունը։ Չնայած էպոսի լեզվի սեղմությանը, բառերի անսովոր ժլատությանը, ոճի մոնումենտալությանը, մանրամասնություններ նկարագրելուց խուսափելուձգտումին, «Սասունցի Դավթի» էջերից իբրև կենդանի մարդիկ հառնում ենհերոսների կերպարները՝ տղամարդ թե կին, որոնք այնքան տարբեր լինելով իրարիցիրենց բնավորությամբ, միևնույն ժամանակ ունեն ինչ-որ ընդհանուր բան։

Էպոսն սկսվում է այն պատմությամբ, թե ինչպես Բաղդադի խալիֆի ուղարկած հարկահանները Հայաստան գալով՝ մի վառ լուսավորված աշտարակում հանկարծ տեսնում են հայոց Գագիկ թագավորի դստերը՝ Ծովինարին (ծովածին, ծովազն):

Խելքահան լինելով նրա հիասքանչ ու հմայիչ կերպարանքից, նրանք թողնում են իրենց գործը, շտապում Բաղդաղ և խալիֆին հայտնում, որ անհրաժեշտ է, ինչ գնովէլ լինի, ձեռք բերել այդ գեղեցկուհուն[1]:

Խալիֆը դեսպաններ է ուղարկում Հայաստան, որոնք նրա անունից պահանջում են գեղեցկուհի Ծովինարին և սպառնում են չտալու դեպքում պատերազմի դուրս գալ: Հայաստանում տարբեր կարծիքներ են ծայր առնում: Ոմանք պնդում են, թե պետք է տալ Ծովինարին, ոմանք էլ առաջարկում են պատերազմել և չտալ արքայադստերը,քանի որ խալիֆը կռապաշտ է, իսկ աղջիկը խաչապաշտ (այստեղ և էպոսի մնացածբոլոր մասերում մահմեդականները ներկայացված են իբրև կռապաշտներ): ՍակայնԾովինարն ինքը միանում է այն մարդկանց կարծիքին, ովքեր գտնում են, որ ավելիլավ է տալ աղջկանն խնայել հազարավոր մարդկանց կյանքը:

Կանանց կերպարները էպոսում հակասական են. կան և՛ ըմբոստ կանայք և՛անձնազոհ:

Էպոսում կնոջ առաջին կերպարը Ծովինարն է: Ծովինարն անձնազոհ կերպար էր, քանի որ ամուսնացավ խալիֆի հետ, որպեսզի պատերազմ չլինի: Ծովինարը հղիանում է ջրից, քանի որ ջուրը անմահության և մաքրության սիմվոլն էր:

Նա հանդիսանում է սերնդի սկզբնավորողը: Այսինքն՝ առասպելական տոհամծառը սկսվում է կնոջից:

Էպոսի հաջորդ կնոջ կերպարը Դեղձուն Ծամն է, նա այնքան համրձակ էր, որ հեռվից հեռու լսելով Սանասարի մասին, ինքն է անում առաջին քայլը և նամակ գրում, որպեսզի Սանասարը <<գա իրեն առնի>>:

Հաջորդ կնոջ կերպարն Արմաղանն է՝ Մհերի կինը:

Արմաղանն օգնում էր ամուսնուն ղեկավարել երկիրը: Նա անձնազոհության գնաց, քանի որ ներեց դավաճան ամուսնուն, որն արդեն երկար տարիներ գտնվում էր օտար

[1] Տե՛ս, Գրական ստեղծագործություն. վերլուծության ուղիները և սկզբունքները, Երևան 1983, էջ 31-32:

երկրում՝ սիրուհու մոտ, և ոչ մի տեղեկություն չէր տալիս: Նրա անձնազոհության շնորհիվ շարունակվեց առասպելական տոհմը:

Հայ կնոջ մեջ նստած է այդ անձնազոհ կերպարը և ինչքան էլ տղամարդը լինի տան գլուխը՝ կինը տան պարանոցն է, և որ կողմ պարանոցը ուզի, այդ կողմէլ գլուխը կշարժվի:

Էպոսի նախավերջին կնոջ կերպարը Խանդութն է՝ Դավթի կինը. նա իր խելքով և քաջությամբ չէր զիջում Դավթին: Եվ Դավթի մահից հետո էլ ինքնասպան է լինում:

Էպոսի վերջին կնոջ կերպարը Գոհարն էր: Նա ևս խելացի և անձնազոհ էր և խորհրդանշում էր իսկական հայ կնոջ կերպարը:

Էպոսում սրբացվում է կնոջ կերպարը, որովհետև կանայք էին լույս աշխարհ բերում այդ հերոսներին, քանի որ քաջերից են քաջեր ծնվում, նրանք էին սերնդի շարունակողը: Բոլոր ժամանակներում էլ օջախի սյունը կինն է, ընտանիքի պահողն ու պահպանողն է և, որքան էլ ժամանակները փոխվեն, հայ կնոջ ավանդն ու դերը անփոփոխ, անգնահատելի կմնան:

Կատարելության է հասցրած Դավթի կերպարը: Ժողովուրդը նրան դարձրել է իր իդեալական հերոսը, իր բոլոր սիրելի ու նվիրական հատկանիշների կրողը:

Դավիթը ժառանգում է իր նախնիների ուժը, հզորությունը, խիզախությունը և գեղեցկությունը: Նա մանկուց չէր հանդուրժում բռնությունը: Նա, ի տարբերություն Մելիքի, երբեք չէր խորամանկում և երբեք ծածուկ չէր հարձակվում իր թշնամու վրա: Նա միշտ ազդարարում էր իր գալուստը և ճակատ առ ճակատ դուրս գալիս թշնամու դեմ: Մելիքը նրա հակապատկերն էր: Մելիքը կազմակերպում էր բռնություններ և նրա բոլոր հարձակումները թշնամու վրա եղել են խորամանկ ու ծածուկ:

«Սասնա ծռեր» էպոսից և նրա գրական մշակումներից հատվածներ աշակերտները միջին դասարաններում արդեն անցել են և ծանոթ են նյութին:

Էպոսի ավելի խորացված ու համակողմանի ուսումնասիրությունը հնարավորու - թյուն է տալիս ավելի շատ ուշադրություն դարձնելու նրա[2]՝

- գաղափարական բովանդակությանը,
- բացահայտելու ժողովրդական այս հոյակերտ կոթողի նյութը,

[2] Տե՛ս, Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1980, էջ 19-21:

- վեր հանելու նրա ասելիքի հիմնահարցերը,
- դաստիարակելու աշակերտներին դյուցազնավեպի ոգով:

Չնայած էպոսի գաղափարական բովանդակության ուսուցմանը առանձին ժամ ենք հատկացնում, սակայն այն անցնելիս առաջին ժամից իսկ աշակերտների հետ հանգամանորեն, շերտ առ շերտ բացահայտում ենք գաղափարական բովանդակությունը՝ կապված տվյալ ժամին անցնելիք թեմայի հետ (սյուժե, կերպարների վերլուծություն և այլն):

Իսկ գաղափարական բովանդակությանը հատկացված ժամը հնարավորու - թյուն է տալիս նախորդ ժամերին ասվածը համակարգելու, նոր բացահայտումներկատարելու և ընդհանրացման համար:

Նախքան էպոսի գաղափարական բովանդակությունը հանգամանորեն բացահայտելը պատկերացում ենք տալիս այս ժանրի մասին, ընդհանուր գծերով ծանոթացնում այլ ազգերի էպոսներին: Այն հարցին, թե ինչու այսօր էպոս չի հորինվում, պատասխանում ենք, որ էպոս հորինվում է մարդկության մանկության շրջանում:

Ապա մեր էպոսի ստեղծման ժամանակաշրջանի, նրա մեջ գաղտնա - գրված գաղափարների, բարոյական սկզբունքների, մեր ժողովրդի կողմից մարդու և մարդկայինի մասին պատկերացումների, ժողովրդի հավաքական կենսափոր - ձով վավերացված մշտնջենական արժեքների մասին ենք խոսում, շեշտում, որ այդ արժեքները յուրաքանչյուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են յուրովի: Դասարանը կահավորում ենք էպոսի թեմաներով ստեղծված նյութերով՝ Հ. Կոջոյանի նկարների, Հր. Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանի վերատպությունները,գրքեր (էպոսի տարբեր հրատարակություններ, գրական մշակումներ՝ Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ը, Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը, Չարենցի «Սասունցի Դավիթ»-ը, Հ. Օշականի «Սասունցի Դավիթ թատերգությունը»): Պատերին փակց - ված պաստառներին մեծերի խոսքերն են էպոսի մասին: Օրինակ՝ «Ոչ մի բանի մեջ ժողովուրդներն այնքան պարզ ու պայծառ չեն երևում, որքան էպոսում» (Հ. Թումանյան): Մինչ էպոսի ուսումնասիրության ավարտը դասասենյակի՝ էպոսին հատկացված անկյունում ավելանում են աշակերտների՝ էպոսի թեմաներով արած նկարները, ստեղծած տիկնիկ-կերպարները: Թղթապանակների մեջ աշակերտները

հավաքում են իրենց գրած ռեֆերատները, շարադրությունները, մտքերը, բանաստեղծություններն էպոսի թեմաներով: Աշակերտների մի խումբ էլ աշխատում է էպոսից իրենց ընտրած հատվածի բեմականացումը պատրաստելու համար: Կատարվում են այլ աշխատանքներ ևս: Կարևորում եմ «Սասնա ծռեր» դյուցազներգության նյութի, ստեղծման ժամանակաշրջանի, ուսումնասիրողների կարծիքների մասին գիտելիքներ տալն աշակերտներին: Քանի որ աշակերտները նախօրոք՝ ամռան ընթացքում, կարդացել են էպոսը, իրենց տետրերում նշումներ են կատարել, անդրադարձել կերպարներին, համառոտ ներկայացրել նրանց, նախորդ դասարաններում էլ հատվածներ են անցել էպոսից, հանձնարարվում է ստեղծել էպոսի տետր, որտեղ կատարում են տարբեր աշխատանքներ: Օրինակ՝ որպեսզի ստուգեմ՝ արդյոք կարդացել են էպոսը, դիմում եմ տարբեր մեթոդների: Հանձնարարում եմ էջը ուղղահայաց բաժանել երկու մասի: Տալիս եմ առաջադրանք՝ համեմատել հին և նոր էպոսները, ապա գրել ընդհանրությունները (Վենի դիագրամ մեթոդ): Հին էպոս ենք պայմանականորեն համարում ժողովրդական բանահյուսությունից մեր անցած նախորդ նյութերը՝ Գողթան երգերը, առասպելները՝ ամբողջացրած «Վիպասանք» վերնագրի տակ: Հանձնարարում եմ համեմատել հին և նոր էպոսներում ժողովրդական մտածողության դրսևորումները և այլն: Աշակերտները հիմնականում կարողանում են արտահայտել իրենց մտքերը[3]:

Ապա աշխատում եմ ընդլայնել նյութի մասին աշակերտների իմացության շրջանակները: «Մեր էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև» (Հ. Թումանյան): Էպոսի գաղափարական բովանդակությունն ուսումնասիրելիս խնդիր եմ դնում աշակերտների մեջ դաստիարակել այն ներկայացնող հիմնական տարրերը՝ ազնվություն, հայրենասիրություն, բարձր բարոյականություն: Աշխա - տում եմ զարգացնել նրանց ազգային մտածողությունը, պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: «Սասնա ծռեր»-ը մի ամբողջ համակարգ է, որը կրթում, դաստիարակում է մի ամբողջ ժողովրդի:

[3] Տե'ս, Հակոբջանյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակությանբացահայտումը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան 1982թ., թիվ 1, էջ 11-12:

Գլուխ 2. Ինչպես զարգացնել ժողովրդավարական և քաղաքացիականկարողությունները <<Սասնա ծռեր>> դյուցազներգության օրինակով

Լեռների գրկում ծվարած հայկական գյուղ, ավանդական օդա, քուրսու շուրջը բոլորած փառահեղ ծերունիներ, որ կարծես էպոսից են իջել՝ իրենց մեջ ներառած հերոսական ոգին՝ ավանդված Սասնա դյուցազուններից:
Մեծերին ուշի ուշով հետևում, նրանց շարժուձևը փոքրերը ընդօրինակում, ամենայն ուշադրությամբ լսում են սասունցի քաջերի պատմությունները:
Սա է նրանց դպրոցը, ուսուցիչները հեքիաթներից իջած մեծերն են:

Նրանք չեն սովորեցնում, այլ օրինակ են ծառայում: Վարում են, ցանում, հնձում ու կալսում: Փոքրերը պետք է օգնեն, լսեն <<Հորովելը>>, <<Եզոյին>> ասեն իրենցփաղաքշական խոսքերը, մեծերը հողին ու ջրին տան իրենց դարդն ու ցավը, հոգսն ու հույսը: Եվ այսպես դարեր: Հային դարեդար ուղեկցել է մեր հերոսական էպոսը, որը միաժամանակ ժողովրդի չգրված, բայց միշտ կիրառվող օրենքների գիրքն է: Որքան կարդում, այնքան նորանոր հատկություններ ենք բացահայտում հայի էությունից, դիմագծից[4]:
Էպոսն ուսուցանելիս անպայման կարևորում եմ հերոսների հավաքական կերպարները, խորհրդանիշները: Նրանք մի ամբողջ ժողովրդի դիմանկարն ենեներկայացնում: Առաջադրում եմ հարցեր:

1. Ե՞րբ է ձևավորվել էպոսը:

2. Այդ դեպքում հեթանոսական աստվածության աստվածուհին ինչպե՞ս հայտնվեց քրիստոնեական դարաշրջանում:
3. Ինչպե՞ս զորեղացավ Սանասարը, ի՞նչ էին խորհրդանշում ծովի հատակից դորս բերված զենքերը:
4. Ինչու՞ Բաղդասարը զավակ չունեցավ:

Մի՞թե նրանք չեն մարմնավորում հեթանոսական և քրիստոնեական հավատները՝ ջուրն ու կրակը: Կրակը միշտ էլ վախենում է ջրից /Բաղդասարը

[4] Տե՛ս, Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան 1976, էջ 61-62:

ջուր չի մտնում/: Իսկ ջուրը կյանքի աղբյուր է: Սանասարի սերունդները ապրում և դարեդար հարատևում են: Ժողովուրդն էպոսի սկզբից մինչև վերջ փառաբանում է ազնիվն ու արդարը, հայրենասիրությունը, աշխատանքն ու աշխատասիրությունը, անձնազոհությունը: Վատ արարքները երբեք անպատիժ չեն մնում:

Մեր սիրած հերոսները կյանքով են պատասխան տալիս չկատարած խոստման, երդումը դրժելու համար: Մեծ Մհերն ու Արմաղանը, Սասունցի Դավիթն իրենց տված խոստումը չկատարելու զոհերն են դառնում:

Շատ հետաքրքիր է Ձենով Օհանի կերպարը: Նրա ձայնը թռչում է մեծ արագությամբ, հաղթահարում անհաղթահարելի արգելքներ և հասնում Դավթին, օգնում դուրս գալու անդնդախոր փոսից, ջաղացի քարի տակից: Այն հայ ժողովրդի ամենազոր, ոգեշնչող ձայնն է: Ապագայի հանդեպ հույսը հայն ամփոփել է Փոքր Մհերի կերպարում: Նրան Արտավազդի բախտն է վիճակված: Հոգնած աշխարհից՝ անմահ Մհերը իր անհանգիստ հանգիստը գտնում է Ագռավու քարում:

Տարին երկու անգամ դուրս է գալիս այրից, ստուգում իր հայրենակիցների կյանքը և եզրակացնում, որ չի եկել դուրս գալու ժամանակը՝ ցորենի հատիկը մասուրի չափ չէ, իսկ գարին՝ ընկույզի: Ընկույզի միջուկը մարդկային ուղեղի պատկերը ունի:

Մարդկության գիտակցությունը դեռ Փոքր Մհերի երազածը չէ: Ապրենք հույսով, որ Փոքր Մհերի դուրս գալու ժամանակը չի ուշանա:

Դպրոցում՝ դասավանդման միջոցով փորձում ենք զարգացնել ժողովրդավարա կան և քաղաքացիական կարողությունները <<Սասնա ծռեր>> դյուցազներգության օրինակով[5]: Փորձեմ կիսվել իմ օրինակով, թե ինչպես եմ դա անում դասի ընթացքումն ինչպիսի համագործակցային դասի պլանի միջոցով: Այսպիսով՝

Համագործակցման տեսակը՝ ՄիջառարկայականԴասարանը՝ IX

Առարկան՝ ԳրականությունՏևողությունը՝ 90 րոպե

Մյուս առարկաները՝ ա) Պատմություն,Թեման՝ «Սասունցի Դավիթ»

[5] Տե՛ս, «Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ», Երևան 1981, էջ 20-22:

(Հայ ժողովրդական վեպ, III ճյուղ)

1. Ակադեմիական նպատակը.

- Սովորեցնել վիպական կերպարների միջոցով ընկալել հայ ժողովրդի վեհգաղափարները, իղձերը և լավատեսությունը,
- Վերարտադրողական հմտության զարգացում,
- Աշխատանքի փառաբանում:

2. Միջոցներ.

- Առաջադրանքը ներկայացնել թղթիկի վրա համառոտ շարադրված,
- Դասագիրք, բնագիր, տարբեր գույնի և չափի թղթեր, գունավոր մատիտներ,քարեր, մկրատ, կպչուն թղթեր …

3. Դասասենյակի դասավորությունը.

- Յուրաքանչյուր ճյուղի հերոսների անուններով կազմել 5 հոգանոց խմբեր(դեմ դիմաց):

Դերեր

Ընթերցող - կարդում է հանձնարարված նյութը:

Ժամանակին հետևող, խրախուսող, դիտորդ, գրառող

Մինչև աշատանքին անցնելը (պաստառի կազմումը) միջառարկայական կապև նրա նպատակը.

- Համառոտ ներկայացնել դարաշրջանը, ազգային հատկանիշները,
- Հայրենաճանաչողական և ազգասիրական, հայ լինելու, հայ մնալու, հայապրելու գաղափարը,
- Հայ մշակութային արժեքներ:

4. Համագործակցական խմբերի նպատակը.

- աշակերտի պատասխանատվության զգացում,
- հասկանալու և բացատրելու կարողություն,
- խմբի անդամներին լսելու կարողություն:

5. Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- պետք է կարողանան մեկը մյուսին լսել,
- բացատրեն իրենց քայլերը,

- յուրաքանչյուր աշխատանքի գնահատում:

6. Դասի ընթացքը.Ջերմացում

- Ուշադրությունը կենտրոնացնող հարց. «Գտնել յուրաքանչյուր ճյուղում հայ ժողովրդի առաքինությունների և լավ հատկությունների մեկական օրինակ» (Կազմել պաստառներ):

7. Վերահսկում և միջամտում.

- հետևել խմբային համագործակցության ընթացքին,
- ուշադրություն դարձնել ակտիվ մասնակցող աշակերտին,
- անընդհատ խրախուսել, ոգևորել խմբի մյուս անդամներին,
- տալ անհատական գնահատում:

8. Առաջադրանքի ներկայացում.

- պատահականորեն ընտրված աշակերտը ներկայացնում է,
- լրացումներ խմբի մյուս անդամների կողմից:

9. Գնահատում (նախօրոք տեղեկացնել գնահատման ձևը).

- Գնահատել յուրաքանչյուր խմբին (եթե հնարավոր լինի, կարելի է նաևանդամին) համագործակցային հմտություններն օգտագործելու համար,
- Գնահատել ճիշտ ներկայացնող և հարցերին ճիշտ պատասխանող խմբին(նաև անդամներին):

Բարդ աշխատանքի ավարտից հետո միջառարկայական համագործակցություն - երգ.

- Աշխատանքի փառաբանում, ստեղծագործ ժողովրդի գովերգում,
- Հայրիկ Մուրադյան - «Սասնա ծռեր» վիպերգի «Հողագործի երգը» «Աշխարհիշեն վըր գութնին է…»,

10. Աշխատանքները ցուցադրել սրահում:

11. Հաջորդ դասին կատարել անդրադարձ (կամ դասից հետո).

- Ի՞նչը և ինչպե՞ս կարելի է ավելի լավ անել հաջորդ անգամ[6]:

[6] Տե՛ս, Ջուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան 1980, էջ 32-33:

Եզրակացություն

Այսպիսով, պատահական չէ, որ էպոսի ստեղծման ժամանակ (8-10-րդ դդ.) ծնվեց մեր հզոր հանճարը՝ Նարեկացին (10-րդ. դ.), որի գործի հիմնական գաղափարը հենց դա էր՝ մարդու՝ իր իսկ մեջ, ինքն իրեն դեմ մղած պայքարով, ինքնամաքրմամբ, ապաշխարելով կատարելագործվել և իր աստվածաստեղծ նախկին վիճակին հասնել: Պատմական հարուստ փորձ և հասուն գիտակցություն ունեցող մեր ժողովուրդը դարեր շարունակ իր նվիրական խոհերն ու երազանքներն է ամրագրել մեր ազգային
վեպի մեջ, և այն օգնել է մեզ մեր թշնամիների դեմ մղած պայքարում:

Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝

- մանկական մաքուր պարզություն (անաղարտություն),
- արժանապատվություն,
- արդարամտություն,
- վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է, այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և չարի դեմ պայքարող:

Պատահական չէ սեր արմատի կրկնությունը: Այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր պայման է: Հավատի և հույսի հետ՝ նաև սեր …. Մեր էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են այսօր և հետագայում էլ կուղղորդեն մեր ժողովրդին դեպի կատարելություն:

Աշակերտները, բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան տեսլական՝ ինչպիսի՞ն դառնալ, դեպի ո՞ւր շարժվել: Չէ՞ որ մեր այսօրվա իրականությունը, մեր հեռուստահաղորդումները, մթնոլորտը այն բարեբեր հողը չեն, որտեղ պիտի ծլի ու աճի հայի տեսակը: Մատաղ սերունդը օդի պես կարիք ունի՝ սնվելու մեր ժողովրդական բանահյուսությամբ, մեր դասական գրականությամբ ու արվեստով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գրական ստեղծագործություն. վերլուծության ուղիները և սկզբունքները, Երևան 1983
2. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1980
3. Հակոբջանյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության բացահայտումը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան 1982թ., թիվ 1
4. Ջուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան 1980
5. «Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ», Երևան 1981